

ցիներու մէջ միօրինակ երգեցողութիւնը, ձայնազբեալ, և մենք ու, որ կրնանք, ամենայն իրաւամբ, պարծի մեր ազգային ձայնազրութեամբ, զիւտը տաղանդաւոր երաժշգի Համբարձում կիմոնհանի (1768-1839), պիտի կարենանք արժանավայիլ կերպով ներկայացնել մեր երգերը անոր միջոցաւ և զնել մեր երաժշտութիւնը հաստատ գետանի վրայ: Մինչ այդ, պէտք է զազրին ներկայի մեր եղանակներու թարգմանութիւնը եւրպական ձայնազրութեան՝ մեր, ամաթէօր կամ ոչ, միւզի սիէններու կողմէ: ինչ որ ծանուցուցաւ

մի քանի ամիս առաջ Պոլսիցի օրիորդի մը կողմէ կիրկիոյ Վեհ: Կաթողիկոսին ուղարկուած մի քանի կտոր եկեղեցական եղանակներու առիթով՝ պէտք է զազրին առ միակ պատճառաւ որ անսնք իրենց առ զաւաղեալ ձեւերով՝ հաստատուն կռուան մը պիտի նկատուին օտար քանասէրներու կողմէ: ուստի և առարկայ զառնան առ նոնց հետպատութեանց և մզուին թիւր համոզութերու Այս, այդքան մը զնուութիւն պէտք է ընել մեր քմահանոյքէն ի սէր մեր ազգային արժանապատըռութեան:

Ն. Յ. ԽԻՒՑԱՎԵՐՏԵՍԻՆ

ԱՐԴԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.Զ.Գ.Ա.Ց.Ի.Ն ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ Ի

16 ՅՈՒՆԻՍԻ 1945 թ. և Ա. Է. Շ. ՄԱՆՈՒԿԻՆ

Պրոֆ. Արարատ Ղարիբեանը կարգաց այն ուղերձի տեկստը, որը պիտի յլուէր Սովետական Միութեան ժողովութիւնների հանձնարեց Առաջնորդ Մեծ ԱՏԱԼԻՒՆԻՆ, Ազգա- յին-Եկեղեցական ժողովի փակման առթիւ: Այս ուղերձի վերջնական խմբազրութիւնը կատարել էին երկու Վեհ: Հայրապետները:

ՍՈՒՄ Ժողովրդական Կոմիսարների Սովետի նախագահ
ԽՈՍՔԻ ՎԻՍՏԻՐԻՌՈՒՎԱԿԻԶ ԱՏԱԼԻՒՆԻՆ

Ա Հայաստանեայց Եկեղեցու Համազգային Ժողովի պատգամաւորներս աւարտելով մեր աշխատանքները, հանոյքն ու պատիւն սւնինք յայտնելու Զեզ մեր սրազրին երախտազիտութիւնը: Սովետական Միութեան մեզ արուած դիրութիւններով մենք հը- նարաւորութիւն ունեցանք կատարեալ համերաշխութեամբ և միաձայնութեամբ ընտրե- լու Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս Գէլի՛՛ Արքեպիսկոպոս ԶէՕՐէ՛՛ Բնի՛՛ Անի:

Ա Հայրապետիան զագացուածքով և զիտակութեամբ մեր անկենծ ուրախու- թիւնն ենք յայտնում տեսնելով մեր հայրենիքի կուլտուրական և տնտեսական վերել- քը, որ վեր է բոյօր անկարութիւններից:

Ա Զնայելով վերջին տարիների ահաւոր պատերազմին, որ բնականաբար երկրի ուժերը պիտի լարէր պատերազմական պահանջներին գոհացում տալու համար, տես- նում ենք, որ Հայաստանն ընթացել է ու ընթանում է յարանում զարգացման ճանա- պարհներով:

Ա Մենք տեսնում ենք Հայաստանում արտադրական, զիտական, կուլտուրական, գեղարվեստական և այլ հաստատութիւններ ու հիմնարկներ, մենք տեսնում ենք եր-

բեմնի անապատ հողերն այժմ ծաղկած ու մշակուած ոռոգման մեծ աշխատանքներով, և անհուն է մեր հրճուանքն ու հիացումը մեր ժողովրդական ու պետական կեանքի վերելքը տեսնելով։ Մենք խորապէս գիտակցում ենք, որ այս բոլորը հնարաւոր է այն պատճառով, որ մեր ժողովուրդն էլ մեծ բարեկախոտութիւնն ունի Սովետական Մեծ Ռիութեան մէկ անդամը լինելու, վայելելով Զեր հայրական ինամքն ու բարեացակամ ու աղջոռութիւնը։

«ՄԵՆՔ մեծ յոյս ունենք, որ Սովետական Միութեան պետական և քաղաքագիւտական իմաստութիւնը կը գտնի նաև միջոց ու ճանապարհ վերացնելու այն անարդարութիւնը, որին ենթարկուեց մեր ժողովուրդը առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում»:

Աւելիքը ընդունուեց յոտնկայս խանդավառ ու երկարատեղ ծափահարութիւններով։ Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Տ. Ֆիլան Մ. Վարդապետը Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամաւորութիւնների անոնից կարդաց հետեւեալ ուղերձը՝ ուղղուած Վեհափառ Հայրապետին։

«Մենք Ազգային-Եկեղեցական ժողովի անդամներ» Աթոռակալներ, թեմական առաջնորդներ, հոգեւորական և աշխարհական պատգամաւորներ, հաւաքուելով կյամիածնի Ս. Տաճարի նովիրական հովանու տակ Սովետական Միութեան և արտասահմանի զանազան թիմերից, զեղուն սրտով յայտնում ենք Զերք Վեհափառութեան մեր երախտագիտական գդացումները այն իմաստուն և քաջարի դեկավարութեան համար, որով առաջնորդեցիք մեր Սուրբ Եկեղեցին Զերք երջանկայիշատակ նախորդի մակից ի վեր ամենադժուռարին պայմաններում և Հայրենական մեծ պատերազմի ընթացքում գլխաւորելով բովանդակ հայ հաւատացեալներին՝ Զերք բաժինը բերիք փառապանձ յաղթանակի համար կատարուած արժանի զոհաբերութեանը:

«ԾՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ Նաև այն գդօն և հայրական զեկավարութեան համար, որով այս ժողովն արդինաւորեցիք և բարձրացցիք նրա պատմական նշանակութիւնը»:

Փողովր միաձայն ընդունեց այս ռողերձը բուռն ծափահարութիւններով։

Պրոֆ. Արարտ Ղարիբեանը առաջարկ մտցրեց զերբարմունք ցոյց տալու զերմանական Փաշիզմի Նկատմամբ Վասիկանի բռնած գատապարտելի դիրքի մասին։ Այս հարցի առթիւ ժողովը նպաստակայարմար Համարեց ընթեցուած դիմումի տեկստի վերահսկացումը թողնել Վեհափառ կաթողիկոսներին։

Այսուհետեւ խօսք տրուեց Յունաստանի թէմի առաջնորդ Տ. Կարապետ Արքեպիսկոպոս Մազլումեանին, որը ջերմ յուզմունքով նկարագրեց այն հսկայ աշխատանքը, որ կատարել է Աղքիս Նորընտիր Գեհավառ Հայրապետը բարձր գնահատելի վարչագործութիւն ցուցաբերելով։ Սրբազն Մազլումեանը հաղորդեց նաև իր թէմի ժողովով ջերմ ողջ յնները ու սրտագին բարեմաղթութիւններով արեշատութիւն մաղթեց ժողովուրդների հանճարել Առաջնորդ ՄԵԾՆ ԱՏԱԿԻՒԹԻՆ, Հայաստանի ՍՍԲ Գերաբոյն Աղքետի Նախագահութեան նախագահ Մացակ Պապեանին և Ս. Էջմիածնի արժանութեան Փահանակին։

Մի շարք այլ պատգամաւորների ելոյթներից յետոյ Ազգին վեհափառ կաթողիկոս Տ. Գևորգ Պատրիարք Ալեքանդր-Ներկանցական ժողովը հետեւել ճառով.

Պ. Տ. Խորեգ Հ. Ը կազմոց աղջույնի մասին պատգամաւոր մեր զաւակները իրենց

իսուական ընթացքով և խմաստուն խօսքերով հմայեցին մեզ։ Ժողովը ցոյց տուաւ շատ ընդգծելի կողմեր, տեսայ հայ ժողովրդի սէրը՝ գէպի Ս. կջմիածնն, մի՞թէ Զեր Ս. կջմիածնն գալը Ազգային-Եկեղեցական ժողովին մասնակցելու և հայրենիքը տեսնելու համար՝ հեռաւոր վայրերից յաղթահարելով ամէն նեղութիւն և գծուառութիւն, հայ ժողովրդի և անձնապէս Զեր սիրոյ և պարտաճանաչութեան նշանակ չէ։ Հայ եկեղեցին ցարդ բարոյապէս միասնական էր, բայց ոչ իրաւապէս։ Կիլիկիոյ Ծնորհագարդ Տ. Գարեգին Կաթողիկոսի Երկար ճամբորդութեան պատճառած դժուարութեանց յաղթահարելով Ս. կջմիածնն գան և ժողովում ունեցած եղոյթները միասնականութեան գողագիարի իրական և իրաւական արտայայտութիւններ չեն։ Իմ Երկրորդ կոնգակը պիտի լինի, Տ. Գարեգին Ա. Կիլիկիոյ Կաթողիկոսին վեղարի խաչ կրելու իրաւունքի շնորհումը։ Այսօր տեսայ համերաշխութեան ոգին վերագրածած մեր մէջ, որի համար պիտի ազօթեմ, որ գաւանյ մշտնշենական։ Տեսայ Զեր բուռն զգացմունքը գէպի Ս. կջմիածնն և գէպի մեր սիրելի Հայրենիքը՝ Սովիտական Հայաստանը, որը դիտու թեան, գեղարուեստի և տեխնիկայի բարձր վերելքով է փառաւորււմ։ Պիտի ազօթեմ Հայրենիքի ու Սովիտական պետութեան զօրացման համար։ Անձամբ տեսաք, թէ ինչպիսի համերաշխութիւն կայ պետութեան և Եկեղեցու միջն, ինչպիսի աղնիք զգացումներ՝ իրարու հանդէպ։ Տեսաք, թէ ինչպիսի դժուարութիւններ են հարթուած և ինչպիսի համերաշխութիւն կայ մեր Երկրում, որի հետեանքըն է մեր Հայրենիքի բերելքը։ Մանք բոլորը տեղի են ունենում Ռուս Մեծ Ազգի և մեր Սովիտական Մեծ Պետութեան շնորհիւ։ Օրնում եմ Ռուս Մեծ Ազգին և նրա Մեծ Առաջնորդին, ժողովուրդից սիրուած ՄԱՐԾԱԼ ՍՏԱԼԻՆին։ Օրնում եմ Ձեզ բուրդիկ, օրնում եմ և այն ժողովուրդին, որ Ձեզ նման խոհական ներկայացուցիչներ ընտրեց և ուղարկեց։ Օրնեալ էք և օրնեալ լինիք ճ։

Ժողովը խորին երկիւղածութեամբ լսեց Հայրապետական «Պահպանիչ»ը և Տէրունական ազօթքը ։

Ատենապետ Աւետիք Խսահակեանը յայտարարեց, թէ 1945 թուի Յունիսի 16ին բացուած Ազգային-Եկեղեցական ժողովը սպառած լինելով օրակարգի բոլոր հարցերը, փակուած և լուծուած է յայտարարում Յունիսի 25ին, Երկուշարթի օրը, Երեկոյեան ժամը 10 և 15 բոպէին։

Ազգային-Եկեղեցական ժողովի նախազան՝

ԿիլիկիԱ.Ցի ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա.

Ատենապետներ՝

Ա. ԽՍԱՀԱԿԵԱՆ

Ս. ՄԱԼԻԿԱՆԵԱՆ

Հ. ԶԱԴԵՐ

Քարեւղարութիւն՝

Տ. ԳՐԻԳՈՐ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

ՄԱՀԱԿ Ա. ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆ

Գ. Ա. ՔԱՀ. ՔԱՀ. ԹԱՎԱՐԲԵԿԵԱՆ

Ա. ՄԱԶՀԱՅԵԱՆ

